«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2015թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ
ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն..... 2
Ամփոփ համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
Ամփոփ համախմբված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն..... 4

pwc

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ընդգրկում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, և այդ ամսաթվին ավարտված տարվա ամփոփ համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, որոնք կազմվել են 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և վերջինիս դուստր ձեռնարկությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից: 2016թ. ապրիլի 21-ին մենք արտահայտել ենք դրական կարծիք այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ընդգրկում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ կարծիք արտահայտել ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, հիմնվելով մեր կողմից *«Աուդիտորական եզրակացություն տրամադրելու նպատակով՝ ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրականացվող ընթացակարգեր»* աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810-ի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

«Փրայսուոթերհաուս Կուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, «ՆՈՐԴ» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ
Հեռ. (37460)652165, ֆաքս (37410)501341, www.pwc.com/am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Եզրակացություն

Մեր կարծիքով, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Խմբի՝ աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC

21 ապրիլի 2016թ.
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

մլն. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2015թ.	31 դեկտեմբերի 2014թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	322,577	324,644
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	9,551	9,531
Տրամադրված փոխառություններ	116	136
Հետաձգված հարկային ակտիվներ	13,165	12,143
Շահութահարկի գծով ոչ ընթացիկ կանխավճարներ	686	686
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	416	1,368
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**346,511**	**348,508**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	16,320	14,778
Տրամադրված փոխառություններ	222	1,579
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	76,874	61,984
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար	269	770
Ժամկետային ավանդներ	615	8,375
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14,971	13,211
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**109,271**	**100,697**
Ընդամենը ակտիվներ	**455,782**	**449,205**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	327,596	316,596
Լրացուցիչ կապիտալ	265	-
Կուտակված վնաս	(95,683)	(84,934)
Ընդամենը սեփական կապիտալ	**232,178**	**231,662**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	37,350	56,921
Պետական շնորհներ	359	397
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**37,709**	**57,318**
Ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	137,791	102,271
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	48,104	57,954
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**185,895**	**160,225**
Ընդամենը պարտավորություններ	**223,604**	**217,543**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**455,782**	**449,205**

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2016թ. ապրիլի 21-ին:

Վարդան Հարությունյան
Վարչության նախագահ – գլխավոր տնօրեն

Արմեն Ունանյան
Գլխավոր հաշվապահ

մլն. ՀՀ դրամ	2015թ.	2014թ.
Հասույթ	235,130	226,835
Վաճառքի ինքնարժեք	(210,727)	(208,390)
Համախառն շահույթ	**24,403**	**18,445**
Այլ գործառնական եկամուտ	1,384	74,164
Ընդհանուր և վարչական ծախսեր	(14,009)	(10,566)
Այլ գործառնական ծախսեր	(4,292)	(17,569)
Գործառնական շահույթ	**7,486**	**64,474**
Ֆինանսական եկամուտ	942	1,043
Ֆինանսական ծախսեր	(20,167)	(31,437)
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**(11,739)**	**34,080**
Շահութահարկի գծով փոխհատուցում	990	894
Տարվա (վնաս)/շահույթ	**(10,749)**	**34,974**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**(10,749)**	**34,974**

	Խմբի սեփականատերերին վերագրելի			
մլն. դրամ	Կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	**312,072**	**-**	**(119,908)**	**192,164**
Կանոնադրական կապիտալի փոփոխություն	4,524	-	-	4,524
Ընդամենը 2014թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	34,974	34,974
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**316,596**	**-**	**(84,934)**	**231,662**
Բաժնետոմսերի թողարկում	11,000	265	-	11,265
Ընդամենը 2015թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(10,749)	(10,749)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**327,596**	**265**	**(95,683)**	**232,178**

մլն. ՀՀ դրամ	2015թ.	2014թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը	(11,739)	34,080
Ճշգրտումներ.		
Մաշվածություն	12,199	12,422
Կանոնադրական կապիտալում փոփոխություն	-	4,524
Դուստր ձեռնարկության օտարումից զուտ օգուտ	-	(9,310)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում	201	1,999
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում	(97)	(123)
Տրամադրված փոխառությունների դուրսգրում	1,370	-
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	169	42
Շնորհված հիմնական միջոցներից եկամուտ	(56)	(52)
Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս	3,765	27,812
Տոկոսային եկամուտ	(942)	(1,043)
Տոկոսային ծախս	17,212	13,477
Եկամուտ առևտրային կրեդիտորական պարտքերի հրաժարումից	(18)	(15)
Պահուստների փոփոխություն	(22)	(17)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	**22,042**	**83,796**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ	(13,748)	(3,429)
Պաշարների աճ	(2,727)	(3,823)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ	152,943	14,050
Շրջանառու կապիտալի փոփոխություններ	**136,468**	**6,798**
Ստացված տոկոսային եկամուտ	555	329
Վճարված տոկոսներ	(9,035)	(9,011)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	**150,030**	**81,912**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(10,214)	(6,832)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	52	20
Դուստր ձեռնարկությունների օտարումից մուտքեր, օտարումից զուտ կանխիկ	499	1,918
Ժամկետը լրացած ավանդների մարում	8,150	2,400
Նոր ավանդների տեղաբաշխում	(407)	(8,276)
Վաճառքի համար մատչելի ներդրումներից մուտքեր	-	800
Տրամադրված փոխառություններ	(3,945)	(243)
Մուտքեր տրամադրված փոխառությունների մարումից	3,964	231
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	**(1,901)**	**(9,982)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր նոր բաժնետոմսերի թողարկումից	11,265	-
Մուտքեր վարկերից և փոխառություններից	107,936	135,669
Վարկերի և փոխառությունների մարում	(265,472)	(205,604)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	**(146,271)**	**(69,935)**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(98)	(24)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**13,211**	**11,240**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**14,971**	**13,211**